ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ՝ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

### ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, պատվիրակության անդամների հետ, այցելեց Թբիլիսիի Հերոսների հրապարակ, հարգանքի տուրք մատուցեց Վրաստանի անկախության համար զոհվածների հիշատակին, ծաղկեպսակ դրեց նրանց հուշակոթողին:

### «ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՂԹԱՀԱՐԵՆՔ ՄԻԱՍԻՆ». ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

Պաշտոնական այցի շրջանակներում՝ կայացավ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկ-




րորդի եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը:

Համայն Վրաստանի հոգեւոր առաջնորդը ողջունեց Հայաստանի վարչապետի պաշտոնական այցը եւ վստահություն հայտնեց, որ այն կնպաստի հայ-վրացական կապերի հետագա զարգացմանը:

- Մենք ապրում ենք դժվար ժամանակներում, բայց այդ դժվարությունները պետք է հաղթահարենք միասին,- ասաց Իլիա Երկրորդը:

Իր հերթին, Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ հիշելով Իլիա Երկրորդի հետ 2018 թվականի հունիսին իր առաջին հանդիպման հաճելի հիշողությունները:

- Այս ընթացքում մեր հարաբերություններում արձանագրվել է դրական շատ բան, մեզ հաջողվել է այնպես անել, որ երկու երկրների հարաբերությունները առաջընթաց ապրեն,- ասաց Հայաստանի վարչապետը եւ հավելեց, որ երկու ժողովուրդների՝ քրիստոնեական արժեհամակարգին հավատարմությունը եւս մեծ դեր է խաղում քաղաքական հարաբերություններում:

### ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ՝ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԿԱՄՈՒՐՋ

Վրաստանի խորհրդարանում կայացավ օրենսդիր մարմնի նախագահ Արչիլ Թալակվաձեի եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը:



Հանդիպմանը Արչիլ Թալակվաձեն կարեւորեց երկու երկրների կառավարությունների եւ խորհրդարանների միջեւ ակտիվ համագործակցությունը եւ ընդգծեց, որ վարչապետի այս այցը նոր ազդակ կհաղորդի վրաց եւ հայ ժողովուրդների կապերի է՛լ ավելի ամրապնդմանն ու ընդլայնմանը: Վրաստանի խորհրդարանի նախագահն ընդգծեց տեղի հայ համայնքի դերը երկրի զարգացման գործում՝ հավելելով, որ այն վրաց-հայկական միջպետական կապերի խթանման ամուր կամուրջ է:

### «ԴԺՎԱՐ Է ԱՍԵԼ, ԹԵ ԻՆՉՊԻՍԻՆ ԿԼԻՆԵՐ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՆՑ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ»

Պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, պատվիրակության անդամներ Լենա Նազարյանի, Սուրեն Պապիկյանի, Արայիկ Հարությունյանի, Հակոբ Արշակյանի, Ռուբեն Սադոյանի եւ Հրաչյա Թաշչյանի հետ, մարտի 3-ին Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան ակադեմիական թատրոնում հանդիպում ունեցավ վիրահայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը մասնակցում էին ոչ միայն Թբիլիսիի, այլ նաեւ Սամցխե-Ջավախեթիի,



Քվեմո Քարթլիի, Շիդա Քարթլիի, Կախեթիի եւ Աջարիայի հայ համայնքի ներկայացուցիչները:

Ողջունելով ներկաներին՝ Նիկոլ Փաշինյանը հիշեցրեց, որ վարչապետի պաշտոնը ստանձնելուց հետո իր առաջին օտարերկրյա այցը կատարել է Վրաստան:

- Ջերմությամբ եմ հիշում մեր հանդիպումը Թբիլիսիի հայկական եկեղեցու բակում: Անմոռանալի էր նաեւ Սամցխե-Ջավախեթիում ունեցած հանդիպումները: Այդ այցի ընթացքում իմ վրացի գործընկերներին առաջարկեցի մեր հարաբերությունները կառուցել մի նոր բանաձեւի վրա՝ Վրաստանը եւ վրաց ժողովուրդը պետք է համոզված լինեն, որ Հայաստանը եւ հայ ժողովուրդը չեն ներգրավվի որեւէ հակավրացական դավադրության մեջ, չունեն ոչ մի վատ տրամադրվածություն Վրաստանի եւ վրաց ժողովրդի նկատմամբ, հակառակը՝ շահագրգիռ են, որ Վրաստանը լինի զարգացած, կայուն երկիր: Նաեւ այդ բանաձեւին համապատասխան, Հայաստանը եւ հայ ժողովուրդը պետք է համոզված լինեն, որ Վրաստանը եւ վրաց ժողովուրդը չեն ներգրավվի որեւէ հակահայկական դավադրության մեջ, չունեն բացասական տրամադրվածություն, հակառակը՝ շահագրգիռ են, որ Հայաստանը լինի զարգացած պետություն,- նշեց Հայաստանի վարչապետը եւ հավելեց, որ վերջին մեկուկես տարվա ընթացքում հենց այս բանաձեւի վրա են հիմնվել հայ-վրացական հարաբերությունները՝ ձեւավորելով աննախադեպ եւ բացառիկ մթնոլորտ:

- Մեր հաջորդ առաջարկն է, մեր հարաբերությունները դիտարկենք հարյուրամյակների կտրվածքով՝ այսօրվանից կարողանանք ընդհանուր պատկերացումներ ունենալ, որովհետեւ այս տարածաշրջանում հազարամյակներով ապրել ենք կողք-կողքի,- ասաց վարչապետը՝ հավելելով, որ աշխարհում շատ չեն ապրող դրկից ժողովուրդներ, որոնք ունենալով հազարամյակների համատեղ պատմություն՝ չունեն թշնամանքի պատմություն:

Հանդիպմանը Նիկոլ Փաշինյանն առանձնակի ջերմությամբ խոսեց թբիլիսահայերի մասին.

- Մեր մշակույթի, ինքնության բազմաթիվ հսկաներ ձեւավորվել եւ գործել են Թիֆլիսում, թիֆլիսահայության միջավայրում: Դժվար է ասել, թե ինչպիսին կլիներ մեր ինքնությունը Հայաստանում, եթե չլիներ այն մեծ մշակութային ժառանգությունը, որն ստեղծվել է Թիֆլիսում: Ընդհանրապես, մեր ժամանակակից ինքնությունը երեք հենասյուներ ունի, խոշոր մշակութային հենասյուներ՝ Թումանյանը, Թամանյանը եւ Կոմիտասը: Կարծում եմ, որ Թումանյանն, ըստ էության, ուղնուծուծով թիֆլիսեցու ամենավառ օրինակն է եւ արտահայտում է թիֆլիսահայության կարեւորությունը մեր ժողովրդի համար,- նշեց Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը եւս մեկ անգամ շնորհակալություն հայտնեց Վրաստանի կառավարությանը՝ հայ ժառանգության նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի համար, որն ըստ նրա կարեւոր գործոն է՝ հայ-վրացական ժամանակակից հարաբերություններում:

- Մեզ իրար է միացնում քրիստոնեությունը եւ քրիստոնեական ժառանգությունը: Պետք է անենք լավագույնը, որպեսզի Վրաստանի հետ իմ մատնանշած հենքի վրա մեր հարաբերությունները ստանան երկարաժամկետ եւ ռազմավարական բովանդակություն,- նշեց Հայաստանի վարչապետը եւ հավելեց, որ ներկա գործունեության կարեւոր առաքելությունը ապագայի այն տեսլականն է, որում պետք է ապրեն երկու ժողովուրդների սերունդները հիսուն, հարյուր տարի անց:

- Հայաստանը ոչ միայն Հայաստանի քաղաքացիների հայրենիքն է, այլեւ բոլոր հայերի պետությունն է, անկախ նրանից, թե այդ մարդիկ որ երկրի քաղաքացի են: Այդուհանդերձ, մենք շահագրգիռ ենք, որ Վրաստանի հայությունը լինի լիարժեք պատասխանատու Վրաստանի քաղաքացի, որովհետեւ դա մեր հարաբերությունների բնականոն զարգացման կարեւորագույն նախապայմաններից մեկն է, բայց նաեւ մենք համարում ենք, որ Հայաստանի վերաբերմունքը Հայաստանից դուրս ապրողների նկատմամբ եւ հակառակը՝ պետք է փոխվի, պետք է դառնա ավելի կառուցողական, ռազմավարական: Մենք պետք է աշխարհում ունենանք հնարավորինս շատ բարեկամներ եւ ամեն ինչ անենք, որ մեր բարեկամները դառնան ավելի բարեկամ: Հետեւաբար, հայ-վրացական հարաբերությունների գլխավոր խնդիրը սա է՝ լինել ավելի ու ավելի հուսալի բարեկամ, գործընկեր միմյանց նկատմամբ: Ես վստահեցնում եմ, որ մենք վստահ քայլերով գնում ենք հենց այս ճանապարհով,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

Հայաստանի վարչապետի, պատվիրակության անդամների եւ վիրահայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպումն ընթացավ հարց ու պատասխանի ձեւաչափով: Դահլիճից հնչեցին «Վրաց-հայկական գործարարների միության» նախագահ Սամվել Աղեկյանի, Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան համալսարանի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող, ծնունդով ջավախեթցի Ռեւիկ Կարապետյանի, Մառնեուլիի մունիցիպալիտետի Խոխմել գյուղի բնակիչ Վաղինակ Մամուլյանի, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի, Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի անդամ Համլետ Մովսիսյանի, Ախալցիխեի մեդիա վերլուծական կենտրոնի ղեկավար Էդուարդ Այվազյանի հարցերը, որոնք վերաբերում էին հայ-վրացական հարաբերություններին, հայրենադարձությանը, տնտեսական, կրթական, ճանապարհաշինության ոլորտներին:

### ԿՈՎԿԱՍՅԱՆ ՀՈՎՎԱՇՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Պաշտոնական այցով Վրաստանում գտնվող Նիկոլ Փաշինյանին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան նվիրել է կովկասյան զտարյուն հովվաշան ձագ: Այս մասին «Ֆեյսբուք»-յան իր էջում գրառում է կատարել Նիկոլ



Փաշինյանը՝ տեղադրելով նվիրատվության տեսանյութը:

«Իմ ընկերոջ՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի թանկագին նվերը՝ Բոնբորը՝ կովկասյան զտարյուն հովվաշուն: Նա կլինի մեր հինգերորդ շունիկը՝ Քայլոյից, Արջուկից, Ամպիկից, Մոլլիից հետո: Շնորհակալ եմ»,- գրառել է Նիկոլ Փաշինյանը:

### ՄԵԿՆՈՒՄԸ ԹԲԻԼԻՍԻԻՑ

Մարտի 4-ին ավարտվեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի պաշտոնական այցը Վրաստան: Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան միջազգային օդանավակայանում Հայաստանի վրչապետին եւ նրա գլխավորած պատվիրակության անդամներին ճանապարհեցին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, Վրաստանի կառավարության եւ օրենսդիր մարմնի ներկայացուցիչները:



ՄԱՐՏԻ 8-Ը ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

# ՕՔՍԱՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ. «ՋԱՆԴԱԲԱ՞... ՈՉ, ՉԵՄ ԵՂԵԼ»



*Ի նշանավորում Կանանց տոնի՝ մենք ընտրել ենք Ծալկայի շրջանի Դարագյուղի բնակիչ Օքսանա Թորոսյանի կյանքի անսովոր պատմությունը, որը, կարծում ենք, խրախուսող օրինակ կդառնա երիտասարդների համար:*

*Հարազատ ընտանիքում ու իրենց գյուղի հասակակիցների շրջանում չարաճճիություններով առանձնացող Օքսանան նրանցից առանձնացավ նաեւ իր երազանքներով: Ութ տարեկան աղջնակը խիզախեց երազել, ոչ ավել, ոչ պակաս, հնդկերեն սովորելու մասին: 2010 թվականին մեր թերթում հրապարակված «Հաջողություն քեզ, Օքսանա» հոդվածում մենք պատմում ենք երիտասարդ աղջկա՝ իր երազանքին հասնելու ջանքերի մասին: Հիմա Օքսանան Հնդկաստանի մայրաքաղաք Դելիի Ջամիա համալսարանի Միջազգային հարաբերությունների ակադեմիայի ասպիրանտ է:*

- *Օքսանա, ինչո՞ւ հենց հնդկերեն ու Հնդկաստան, երբ աշխարհում պահանջարկ վայելող լեզուների ու երկրների առաջնագծում եվրոպական երկրներն են...*

- Հնդկերենի մասին իմ բացատրությունը մեկն է. դժվար էր դիմադրել մանուկ օրերից ծնված երազանքին՝ մանավանդ ինձ նման ակտիվ աղջկա համար, ով մտքին դրածը, ցանկացած գնով, պիտի իրականացներ: Ի դեպ, իմ մեջ այսօր էլ է ապրում այդ չարաճճին... Ասեմ, որ Հնդկաստանում ես զուգահեռաբար հասցրեցի տիրապետել անգլերենին, քանի որ այդ լեզուն ունի պետական լեզվի կարգավիճակ եւ հիմա գերմաներեն եմ սովորում:

Ինչ վերաբերում է Հնդկաստանին... Ինձ համար այն եղել է երկրների երկիր: Ես ամեն օր մի նոր բան եմ հայտնաբերում այս երկրի զարմանահրաշ քաղաքակրթության, մշակույթի եւ ավանդույթներով հարուստ նիստուկացի մեջ: Մի բան էլ կա, որ հաստատ արժի սովորել հնդիկներից. դա, կյանքի ցանկացած իրավիճակում, լավատես մնալու նրանց կարողությունն է:

- *Ծալկայի գյուղից եկած միայնակ աղջիկը Ջամիայի համբավավոր համալսարանի ուսանող է դարձել. քեզ, դրան հասնելուն, կախարդական փայտի՞կն օգնեց...*

- (ժպտում է): Չգիտեմ, երեւի այդպիսին էր նախախնամության կամքը:

Մինչ այդ սովորեցի Ագրա քաղաքի Հինդի ինստիտուտում, հետո՝ այդ երկրի Լակնաուի համալսարանում մասնագիտացա տուրիզմի կառավարման գծով, հետո ընդունվեցի մագիստրատուրա, ստացա ընդհանուր լրագրության մասնագետի դիպլոմ: Ջամիան եղավ այս ամենից հետո միայն:

- *Ժամանակին Հնդկաստանում ապրել են մեծ կարողության տեր բազմաթիվ հայեր. ի՞նչ գիտես տեղի հայերի մասին, կապ ունե՞ս տեղի հայկական համայնքի հետ:*

- Ցավոք, ես համայնքի հետ կապեր չունեմ, բայց, երբ հինդի լեզվի կենտրոնական ինստիտուտում դասախոսներիս շուրթերից հնչեցին՝ Հնդկաստանի ազգային ու մշակութային կյանքում դարեր շարունակ իրենց դերը ներմուծած հայերի մասին, ինձ հպարտ զգացի: Նրանք հիշատակում էին հարավ-արեւելքում գտնվող Բենգալյան ծոցի Մադրաս քաղաքում տպագրված պատմամշակութային, գրական-հասարակական հայկական առաջին ու նաեւ՝ Հնդկաստանի՝ առաջին ոչ անգլերեն տպագիր հանդեսի՝ «Ազդարար» պարբերականի (1794-1796թթ.) մասին, որը խմբագրել է եկեղեցական Հարություն Շմավոնյանը: Նաեւ՝ շուրջ տասը այլ հայկական պարբերականների մասին, որ տպագրվել են Կալկաթայում, ուր մինչեւ օրս գործում են հայկական դպրոց եւ եկեղեցի: Ի դեպ, 2012-ին, Մադրասում նշվեց հայերի՝ այնտեղ գոյատեւման, 300-ամյա հոբելյանը:

- ***Քանի՞ պետական լեզու կա Հնդկաստանում, եւ ո՞ր լեզվով է խոսում երկրի բնակչության մեծամասնությունը:***

- Պետական լեզուն հինդին է եւ անգլերենը, իսկ յուրաքանչյուր նահանգ իր ազգային լեզուն ունի:

- ***Պետական լեզուն չիմացողը կարո՞ղ է երկրում որեւէ խնդիր ունենալ:***

- Նման մարդիկ, պարզապես, չեն կարողանա երկրի բարձր կառույցներում պատասխանատու պաշտոններ գրավել:

- ***Օքսանա, մեր թերթի խմբագիրը խնդրեց ինձ հարցնել, թե Հնդկաստանում ապրած տարիներին, եղե՞լ ես Ջանդաբա կոչվող այն քաղաքում, որը գտնվել է միջնադարում հայտնի «Մետաքսե ճանապարհի» ամենավերջին կետում՝ փռված լինելով Հիմալայների լանջերին:***

- Ջանդաբա՞... ո'չ, չեմ եղել... Ա՜յ, հիմա նոր հասկացա, թե ինչու են հայերն ու վրացիները «ջանդաբա» բառը օգտագործում «հեռուն» ուղարկելիս: Հաջորդ անգամ անպայման կայցելեմ

- *Թբիլիսիի «Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում կա հնդկական գրական ամսագիր, որտեղ տպագրված է քո հեղինակությամբ հնդկերեն թարգմանված «Գիքորը» պատմվածքը. ինչո՞ւ որոշեցիր թարգմանել հենց «Գիքորը» եւ ոչ մեկ այլ գործ:*

- Հենց սկզբից ասեմ, որ թարգմանելու նպատակը կապված չէր Թումանյանի 150-ամյակի հետ:

...Ես Դելիի փողոցներում հաճախ հանդիպում եմ գյուղերից եկած երեխաների, ովքեր ծառայում են հարուստների տներում: Նրանք ինձ մշտապես հիշեցրել են Գիքորին: Թարգմանելիս՝ ցանկացել եմ՝ Գիքորի պատմությամբ մի քիչ խղճահարություն արթնացնել այն մարդկանց մեջ, ովքեր՝ իրենց տներում ծառայող Գիքորներ ունեն:

- ***Ու՞մ հետ ես ընկերություն անում:***

- Իմ շրջապատում կան հայ-հնդկական բազմաթիվ ընտանիքներ, ու ես կապված եմ նրանց: Բացի այդ, Դելիում վերջերս բացվեց Հայաստանի մշակույթի կենտրոն, ուր կազմակերպվում են միջոցառումներ եւ դրանով՝ հայերիս իրար հանդիպելու հնարավորություն է ընձեռվում: Ունեմ նաեւ վրացի մտերիմ ընկերուհիներ, որոնք նույնպես ամուսնացած են հնդիկների հետ: Իմիջիայլոց, տիկին Նաթելան, ինձ հարազատի պես է ընդունում եւ միշտ կերակրում է վրացական համեղ ուտեստներով:

- ***Այժմ դու հաջողակ ասպիրանտ ես, ո՞վ կուզենայիր լինել մի 10-ը տարի հետո:***

- Կուզենայի արժանի եւ պիտանի մարդ լինել: Մարդ՝ իր ասելիքով, իր օրինակելի աշխատանքով: Ինչպես ասում է Բանաստեղծը՝ կյանքում ամեն ինչ անցողիկ է, արածդ գործն է միայն անմահ... Ուզում եմ՝ բարի հիշվեմ:

*Զրուցեց ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ*

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ

*Հաշվի առնելով գլոբալ մասշտաբների հասած նոր կորոնավիրուսով վարակման բարձր հավանականությունը, ներկայացվող նյութում մենք պարզաբանումներ ենք ներկայացնում վիրուսի ծագման, տարածման ուղիների, ինչպես նաեւ պաշտպանվելու հանձնարարականների մասին:*

Կորոնավիրուսային հիվանդություն 2019 (COVID-19)՝ վարակային հիվանդություն, առաջացած SARS-CoV-2-ով, որը սերտ առնչվում է SARS վիրուսին: Այս հիվանդությունը 2019-20-ի կորոնավիրուսային համաճարակի պատճառն է:

Գենոմը իրենից ներկայացնում է միաշղթա (+)ՌՆԹ: Նուկլեոկապսիդը շրջապատված է սպիտակուցային թաղանթով եւ լիպիդային արտաքին թաղանթով, որից հեռանում են քորոցանման փշաձեւ ելուստներ, որոնք նմանվում են թագի. այստեղից էլ ծագել է կորոնավիրուս անվանումը:

**Ինչպե՞ս է տարածվում**

Հիվանդության հիմքում ընկած է ծանր սուր շնչառական համախտանիշի կորոնավիրուս 2-ը (SARS-CoV-2), որը նախկինում հիշատակվել է՝ որպես 2019-ի նոր կորոնավիրուս (2019-nCoV): Հետազոտողները գտնում են, որ վիրուսը կենդանական ծագում ունի:

Այն հիմնականում փոխանցվում է մարդկանց միջեւ փոքր կաթիլների միջոցով, երբ ինֆեկցված անձիք շնչում կամ հազում են (կամ՝ փռշտում): Վիրուսը կտորի եւ երկաթի վրա գոյատեւում է 12 ժամ:

***Նշաններ եւ ախտանշաններ.***

Վարակված անձինք կարող են անախտանիշ լինել, կամ նրանց շրջանում կարող են զարգանալ այնպիսի ախտանշաններ, ինչպիսիք են տենդը, հազը եւ հեւոցը: Փորլուծությունը եւ վերին շնչուղիների ախտանշանները (օրինակ՝ փռշտոց, քթահոսություն, կոկորդացավ) ավելի հազվադեպ են հանդիպում: Հիվանդությունը կարող է խորանալ, հանգեցնելով թոքաբորբի, բազմաօրգանային անբավարարության եւ մահվան:

Ինկուբացիոն շրջանի տեւողությունը գնահատվել է երկուսից տասը օր ԱՀԿ-ի կողմից եւ՝ երկուսից 14 օր ԱՄՆ-ի Հիվանդությունների Վերահսկման եւ Կանխարգելման Կենտրոնների (CDC) կողմից: Հետազոտությունների արդյունքում՝ հազվադեպ դեպքեր են հայտնաբերվել, երբ ինկուբացիոն շրջանը տեւել է մինչեւիսկ 24 օր:




**Ինչպե՞ս պաշտպանվել**

Վրաստանում կորոնավիրուսի վարակի հետագա տարածումը զսպելու համար, Հիվանդությունների վերահսկման եւ հասարակական առողջության ազգային կենտրոնը մշակել է հանձնարարականներ, որոնք հիմնականում վերաբերում են այն մարդկանց, որոնք պետք է լինեն ինքնամեկուսացման մեջ: Մասնավորապես, վարակի բարձր տարածման արեալից վերադարձած մարդկանց, ինչպես նաեւ՝ հաստատված դեպքի հետ մոտ կապ ունեցող անձանց:

*Այդ հանձնարարականներն են.*

**Առաջին** - մնացեք տանը եւ բոլոր անհրաժեշտ իրերը, այդ թվում՝ դեղամիջոցները, գնեն օգնական մարդիկ:

**Երկրորդ** - սահմանափակեք հաղորդակցությունը ձեզ հետ բնակվող մարդկանց հետ եւ առանձնացած եղեք ննջարանում:

**Երրորդ** - եթե մեկուսացման մեջ գտնվող մարդուն անհրաժեշտ է բժշկական օգնություն, նա նախապես պետք է կապ հաստատի իր պրովայդերի հետ, նախապես ծրագրի իր այցը այս կամ այն բժշկական հաստատություն եւ այնտեղ գնալիս՝ օգտագործի դիմակ:

**Չորրորդ** - օգտագործեք բժշկական դիմակ հատկապես այն ժամանակ, երբ գտնվում եք ընդհանուր տարածքում, թեկուզ՝ ընտանիքի այլ անդամների հետ:

**Հինգերորդ** - հազի եւ փռշտոցի վարվելաձեւ - քիթը փակեք միանգամյա օգտագործման անձեռոցիկով եւ այնուհետեւ նետեք այն աղբամանը:

**Վեցերորդ** - փռշտոցի, հազի, ձեռքի աղտոտման, սնունդ ընդունելու, զուգարանն օգտագործելուց հետո՝ պարտադիր լվացեք ձեռքերը օճառով եւ հոսող ջրով:

**Յոթերորդ** - Մեկուսացման մեջ գտնվողը պետք է ունենա իր ափսեն, բաժակը, պատառաքաղը, գդալը եւ ոչ ոք չօգտվի դրանցից:

**Ութերորդ** - եթե ունեք ընտանի կենդանիներ, փորձեք սահմանափակել նրանց հետ կապը:

**Իններորդ** - օգտագործված անձեռոցիկները, դիմակները դրեք տոպրակի մեջ եւ նետեք աղբը:

## ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ՝ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

***Մարտի 6-ի դրությամբ, Վրաստանում վավերացվել է կորոնավիրուսով վարակման 9 դեպք, կարանտինի ռեժիմում է գտնվում 162 մարդ: Աշխարհում նոր կորոնավիրուսով վարակվածների թիվը, մարտի 6-ի երեկոյի դրությամբ, ավելի քան 100 հազար է (80 հազարը Չինաստանում): Վիրուսից մահացել է 3406 մարդ, ապաքինվել՝ 55 694 մարդ:***

Մարտի 4-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի գլխավորությամբ, անցկացվեց կորոնավարակի գործող միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը:

Նիստում ելույթ ունեցան Վրաստանի բռնազավթված տարածքներից փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Եկատերինե Տիկարաձեն, Հիվանդությունների հսկողության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն:

Նրանք մանրամասն տեղեկատվություն ներկայացրին կորոնավիրուսով վարակման դեպքերի, վարակի տարածումը կանխելու նպատակով իրականացվող միջոցառումների մասին: Մասնավորապես նշվեց, որ կառավարության որոշմամբ մարտի 2-ից երկրում դադարեցվել է ուսումնական դասընթացը, Վրաստանի պետական սահմանի անցակետերում ձեռնարկվել են լրացուցիչ կանխարգելիչ միջոցառումներ: Նոր Կորոնավիրուսի դեմ պայքարելու համար՝ Վրաստանի կառավարությունը պահուստային ֆոնդից առողջապահության նախարարությանը հատկացրել է 1 մլն լարի: Նիստին առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց բնակչության տեղեկացվածության կարեւորությանը, հենց այդ նպատակով կորոնավարակի մասին հասարակությանը լրատվություն փոխանցելու համար կառավարությունը ստեղծել է stopcov.ge կայքը:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՄԱՐՏԻ 1-Ի ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Մարտի 1-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հարգանքի տուրք մատուցեց 2008թ. մարտի 1-ին Երեւանում տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում զոհվածների հիշատակին:*

Արարողությանը մասնակցեցին նաեւ Հայաստանի վարչապետի տիկին Աննա Հակոբյանը, դստրերի՝ Մարիամի, Շուշանիկի եւ Արփիի հետ: Ներկա էին նաեւ նախարարներ եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաներ:

Մարտի 1-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի անունից ծաղիկներ խոնարհվեցին Մյասնիկյանի արձանի մոտ՝ հարգանքի տուրք մատուցելով 2008թ. մարտի 1-ի ողբերգական դեպքերի զոհերի հիշատակին:

Նշենք, որ ծրագրված էր մարտի 1-ի զոհերի հիշատակին նվիրված «Ազատության» հրապարակից երթ մեկնարկել, որը, սակայն, չեղարկվեց Հայաստանում կորոնավիրուսի առաջին դեպքի հաստատման պատճառով: Նաեւ 2020 թվականին նախատեսվում է տեղադրել զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան, որը հեղինակելու է Ալբերտ Վարդանյանը: Արձանը կկոչվի «Ազդեցություն եւ հակազդեցություն» եւ կտեղադրվի Երեւանի Գրիգոր Լուսավորիչ փողոցում՝ Բեյրութի փողոցից դեպի Զաքյան փողոց ձգվող ցանկապատի 22-23-րդ հենապատերի միջնամասում:

Հիշեցնենք, որ 2008 թվականի մարտի1-ի լույս 2-ին Հայաստանի մայրաքաղաք Երեւանի կենտրոնում տեղի ունեցան զանգվածային բողոքի գործողություններ, որի արդյունքում՝ ոստիկանության հետ բախումներ: Իրադարձությունների հետեւանքով զոհվեց 10 (2 ոստիկան, 8 քաղաքացիական անձ) եւ վիրավորվեցին հարյուրավոր մարդիկ: Մայրաքաղաքում հաստատվեց արտակարգ դրություն՝ մեկ ամիս ժամկետով:

## ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՐԱՀՍԿԵԼԻ Է

*Մարտի 6-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:*



Նախքան օրակարգային հարցերի քննարկումը, վարչապետն Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանից հետաքրքրվել է կորոնավիրուսի դեմ պայքարի շրջանակում ձեռնարկվող միջոցառումների ընթացքից:

Արսեն Թորոսյանը տեղեկացրել է, որ բոլոր միջոցառումները շարունակվում են իրականացվել:

- Ունենք մեկ հաստատված դեպք: Հիվանդը բուժում է անցնում «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցում, եւ 31 քաղաքացիներ, որոնք հատուկ մեկուսացված պայմաններում գտնվում են Ծաղկաձորի հյուրանոցներից մեկում,- ասաց նախարարը՝ հավելելով, որ ամեն օր կատարվում են նմուշառումներ եւ իրավիճակը վերահսկվում է:

Արսեն Թորոսյանը տեղեկություններ է ներկայացրել նաեւ աշխարհում կորոնավիրուսի տարածման, զարգացման միտումների մասին:

Նիստին ներկա Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը նշել է, որ Իրանի հետ ձեւավորվել է երկխոսություն տարբեր մակարդակներով, եւ աշխատանքներ են տարվում իրավիճակին միասին հակազդելու ուղղությամբ:

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը տեղեկացրել է, որ հավանաբար, երկուշաբթի օրվանից՝ մարտի 9-ից, դասերն ուսումնական հաստատություններում կվերսկսվեն:

## ԿՆԵՐԴՐՎԵՆ ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

***Հայաստանի ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց կառավարության ներկայացրած օրենքների նախագծերի փաթեթը, որով, մասնավորապես, առաջարկվում է ներդնել հեռավար կրթության իրականացման մեխանիզմ՝ հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների եւ հեռահաղորդակցության միջոցներով:***

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին եւ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենքների նախագիծն Աժ նիստում ներկայացրել էր ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը:

Սահմանվում է, որ հեռավար կրթությունը կրթական ծրագրի իրականացման ձեւ է: Եթե դիցուկ երկու անգամ ուսուցչի մրցույթ է կազմակերպվում, եւ տվյալ տեղի համար դիմորդներ չեն լինում կամ մրցույթը չի կայանում, կարող են իրականացնել հեռավար կրթություն, սակայն կարգ է սահմանվում, թե դա ինչ ժամկետով կարող է լինել, եւ թե հաջորդ մրցույթը երբ կարող է հայտարարվել:

Սահմանվել է նաեւ, որ մանկավարժական, ծնողական եւ աշակերտական խորհուրդները կառավարության հաստատած կարգով կարող են ներգրավվել տվյալ ուսումնական հաստատության տնօրենի ընտրության գործընթացում: Սովորողների ընդունելությունը կազմակերպելիս՝ առաջնահերթությունը տրվում է տվյալ դպրոցում սովորող քույր կամ եղբայր ունեցող երեխաներին, երկրորդը՝ տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաներին:

Սահմանվում է նաեւ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման եւ ուղղորդման կարգը:

Նախագծերի փաթեթը ստացավ կողմ՝ 117 ձայն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԴՅՈՒՐԱՑՎԵԼ Է

***Ազգությամբ հայերի շրջանում Հայաստանի քաղաքացիություն ստանալու թվի աճ է նկատվում: Այս մասին նշեց ՀՀ ոստիկանության Անձնագրային եւ վիզաների վարչության պետ Մնացական Բիչախչյանը: 2017-ին քաղաքացիություն ստանալու համար դիմել էր 10 հազար 40 անձ, 2018 թվականին՝ 12 հազար 449, 2019 թվականին՝ 14 հազար 900 անձ:***

Անձնագրային ոլորտում ընթացիկ տարում զգալի փոփոխություններ են սպասվում: Նկատելիորեն դյուրացվելու են Հայաստանի քաղաքացիություն ստանալու ընթացակարգերը, հատկապես եթե դիմողներն ազգությամբ հայեր են: Նախորդ տարի ՀՀ վարչապետը հանդես եկավ հատուկ հանձնարարականով՝ ազգությամբ հայերին քաղաքացիություն ստանալու ընթացակարգի պարզեցման վերաբերյալ: Քաղաքացիություն ստանալու համար ներկայում օրենքով սահմանված է 6-ամսյա ժամկետ, նոր նախագծով այդ ժամկետը կրճատվում է, դառնալով՝ 3 ամիս:

Նախագծով նախատեսված է մեկ կարեւոր փոփոխություն եւս, որն, ըստ Մնացական Բիչախչյանի, աննախադեպ առաջարկ է: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարիների ընթացքում 20 հազար անձ ստացել է քաղաքացիություն, սակայն դեռ չի եկել անձնագիր ստանալու: Գործող օրենքը նախատեսում է, որ երբ անձն առաջին անգամ ՀՀ քաղաքացու անձնագիր է ստանում, այն պետք է կազմակերպվի ՀՀ-ում: Նոր նախագծով նախատեսվել է դրույթ, ըստ որի՝ քաղաքացիները կարող են անձնագիրը ստանալ եւ երդման արարողությանը մասնակցել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում: Այսինքն՝ մինչ Հայաստան այցելելը, կարող են դիմել եւ դիվանագիտական ներկայացուցիչներից ստանալ իրենց անձնագիրը:

Սպասվող փոփոխությունների համաձայն՝ պարզեցվում են նաեւ քաղաքացիություն ստանալու համար նախատեսված դիմում-հարցաթերթիկները: Մի քանի էջի փոխարեն, լինելու է ընդամենը մեկ էջից բաղկացած դիմում-հարցաթերթիկ եւ հատուկ էջ՝ նշումների բաժին վերնագրով, որտեղ քաղաքացին կարող է զետեղել իր մասին հավելյալ տեղեկատվություն:

Եվս մի կարեւոր սպասվող փոփոխություն: Արդարադատության նախարարությունում մշակվել է բարեփոխումների փաթեթ, որով նախատեսվում է Հայաստանում ներդնել «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սպասարկման գրասենյակներ:

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱՆ



***Մարտի 5-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Երկրապահ կամավորականների միությունում, մասնակցեց սպարապետ Վազգեն Սարգսյանի ծննդյան 61-ամյակին նվիրված միջոցառմանը: Վարչապետը նախ ծաղիկներ խոնարհեց Վազգեն Սարգսյանի հուշարձանին՝ հարգանքի տուրք մատուցելով Սպարապետի հիշատակին:***

***Նույն օրը, Եռաբլուրում Վազգեն Սարգսյանի հիշատակը հարգեց եւ Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը: Նա ծաղիկներ խոնարհեց Սպարապետի շիրիմին: Հիշեցնենք, որ ռազմական եւ քաղաքական գործիչ Վազգեն Սարգսյանը ծնվել է 1959 թվականին: 1991-92, 1995-99 թվականներին եղել է նորանկախ Հայաստանի առաջին պաշտպանության նախարարը, 1999 թվականի հունիսից մինչեւ սպանության օրը, հոկտեմբերի 27-ը եղել է Հայաստանի վարչապետ: Նրան տրվել է Սպարապետ հերոսական պատվանունը, քանի որ մեծ ներդրում է ունեցել Հայաստանի անկախության, անվտանգության եւ Հայկական բանակի կայացման գործում: Վ.Սարգսյանին շնորհվել են Հայաստանի եւ Արցախի բարձրագույն՝ Հայաստանի ազգային հերոս եւ Արցախի հերոս կոչումները:***

### ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔՆ ԱՃԵԼ Է 7,6 ՏՈԿՈՍՈՎ

***Հայաստանում 2019 թվականին համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) աճը կազմել է 7,6 տոկոս:***

***Այդ ցուցանիշը ամենաբարձրն է 2008 թվականից ի վեր:***

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՉԻ ՉԵՂԱՐԿՎՈՒՄ

***Մայր Աթոռը Հայաստանում նոր կորոնավիրուսի հայտնաբերման պատճառով, դեռեւս չի պատրաստվում չեղարկել եկեղեցական արարողությունների անցկացումը:***

***Նշենք, որ աշխարհի տարբեր երկրներում, որտեղ կորոնավիրուսն արդեն մեծ տարածում է գտել, փակվել են տաճարների դռները, հետաձգվել են եկեղեցական արարողությունները:***

### ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

***Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալներով, Հայաստանից արտահանման ծավալը 2019-ի հունվար-դեկտեմբերին կազմել է 2 մլրդ 640 մլն 275.1 հազ. դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 9.4 տոկոսով: Հայաստան ներմուծման ծավալը 2019-ի հունվար-դեկտեմբերին կազմել է 5 մլրդ 513 մլն 798.5 հազ. դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ աճելով 10.8 տոկոսով:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՄԱՐՏ

*8.03.2020 Անառակի կիրակի*



*14.03.2020 Սրբոցն Երուսաղեմի Յովհան Հայրապետի, հայոց Յովհաննես Օձնեցի Հայրապետի, Յովհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի վարդապետների հիշատակության օր*

ՖՈՒՏԲՈԼ

# ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԸ՝ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱԽՄԲՈՒՄ

*Մարտի 3-ին, Նիդերլանդների Ամստերդամ քաղաքում, կայացավ Ազգերի լիգայի 2020/21 մրցաշրջանի խմբային փուլի վիճակահանությունը:*

Վիճակահանությամբ մայրցամաքի ազգային հավաքականները բաժանվեցին չորս ենթախմբերի, յուրաքանչյուրն առանձին խմբերով: Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները հայտնվեցին C խմբի երկրորդ ենթախմբում:

Ինչ վերաբերում է ընդհանրապես խմբերում ներառված թիմերին, ապա այն ունի հետեւյալ տեսքը.

**A ենթախումբ.**

Խումբ 1 - Նիդերլանդներ, Իտալիա, Բոսնիա եւ Հերցեգովինա, Լեհաստան

Խումբ 2 - Անգլիա, Բելգիա, Դանիա, Իսլանդիա

Խումբ 3 - Պորտուգալիա, Ֆրանսիա, Շվեդիա, Խորվաթիա

Խումբ 4 - Շվեյցարիա, Իսպանիա, Ուկրաինա, Գերմանիա

**B ենթախումբ.**

Խումբ 1 - Ավստրիա, Նորվեգիա, Հյուսիսային Իռլանդիա, Ռումինիա

Խումբ 2 - Չեխիա, Շոտլանդիա, Սլովակիա, Իսրայել

Խումբ 3 - Ռուսաստան, Սերբիա, Թուրքիա, Հունգարիա

Խումբ 4 - Ուելս, Ֆինլանդիա, Իռլանդիա, Բուլղարիա

**C ենթախումբ.**

Խումբ 1 - Ադրբեջան, Լյուքսեմբուրգ, Կիպրոս, Մոնտենեգրո

Խումբ 2 - Հայաստան, Էստոնիա, Հյուսիսային Մակեդոնիա, Վրաստան

Խումբ 3 - Մոլդովա, Սլովենիա, Կոսովո, Հունաստան

Խումբ 4 - Ղազախստան, Լիտվա, Բելառուս, Ալբանիա

**D ենթախումբ.**

Խումբ 1 - Մալթա, Անդորրա, Լատվիա, Ֆարերյան կղզիներ

Խումբ 2 - Սան Մարինո, Լիխտենշտեյն, Ջիբրալթար

Ազգերի լիգայի խմբային փուլի առաջին հանդիպումները կկայանան սեպտեմբերից նոյեմբեր ամիսներին, ինչպես նաեւ՝ 2021 թվականին:

ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՆԱՀԻՏ ՍՏԵԼՄԱՇՈՎԱՆ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԵՐԳԻՆ

*Մարտի 4-ին, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, իր պաշտոնական նստավայրում, Օրբելիանիների պալատում, հանդիպում ունեցավ վրաց անվանի դաշնակահար Էլիսո Բոլքվաձեի «Քնար» բարեգործական հիմնադրամի երիտասարդ դափնեկիրների հետ:*



Համերգին՝ երիտասարդ երաժիշտները կատարեցին վրաց դասականների ստեղծագործությունները, որտեղ մեծ հաջողությամբ հանդես եկավ նաեւ ախալքալաքցի տաղանդավոր դաշնակահարուհի, Թբիլիսիի երաժշտական դպրոցներից մեկի սան Անահիտ Ստելմաշովան:

Վրաստանի նախագահը Անահիտին նվիրեց Ֆրանկֆուրտի գրքի ցուցահանդեսի համար թողարկված երաժշտական ստեղծագործությունների հավաքածուն, մաղթեց նորանոր հաջողություններ, նշելով, որ Օրբելիանու պալատում «Քնար» համերգը առաջինն էր եւ, որ դասական երաժշտության երեկոներն ու համերգները կշարունակվեն ապագայում, եւ դա կվերածվի ավանդույթի: Դիմելով երիտասարդ երաժիշտներին, Սալոմե Զուրաբիշվիլին ասաց.

- Ուրախ եմ, որ այս համերգը տեղի ունեցավ Օրբելիանու պալատում, քանի որ այն հարիր է այս պալատին եւ ընտանիքին, որն ապրում էր այս պալատում: Հուսով եմ, որ դուք կհասնեք մեծ հաջողությունների, եւ վրաց կոմպոզիտորների ստեղծագործությունները կհնչեն արտերկրում եւ այնտեղ կդառնան հանրաճանաչ:

Երկրի նախագահը շնորհակալություն հայտնեց Էլիսո Բոլքվաձեի հիմնադրամին: Դաշնակահարուհի Էլիսո Բոլքվաձեն «Քնար» բարեգործական հիմնադրամը հիմնել է մի քանի տարի առաջ՝ Վրաստանի երիտասարդ դաշնակահարներին բացահայտելու եւ աջակցելու համար:

ՏՐԱՆՍՊՈՐՏ



# «ՍԵՎ ԿԵՏԵՐ»՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ

*Վրաստանում, ավտոճանապարհային վթարների արդյունքում, զոհվածների թիվը, չնայած նրան, որ կենտրոնական եւ տարածաշրջանային ճանապարհներին տեղադրված են տեսախցիկներ, չի նվազում:*

Հետեւաբար, ծագեց, այսպես կոչված, «սեւ կետերի» հայտնաբերման եւ, ապա ճանապարհահատվածների անվտանգության միջոցառումների անցկացման անհրաժեշտություն:

Վրաստանի խորհրդարանն արդեն վարույթի համար ընդունել է նման օրինանախագիծ: Դրա իրականացման առաջին փուլում կանցկացվի առնվազն 300 մետր ճանապարհահատվածի սահմանումը, որտեղ, վերջին երեք տարիների ընթացքում, վավերացվել է առնվազն չորս ավտոճանապարհային միջադեպ, որի արդյունքում եղել են զոհեր կամ՝ մարդիկ ստացել են մարմնական վնասվածքներ:

Ինչպես նշեց Վրաստանի ավտոմոբիլային ֆեդերացիայի նախագահ Շալվա Օգբաիձեն՝ ճանապարհներին «սեւ կետերի» հայտնաբերումը հնարավորություն կտա կանխել հնարավոր պատահարները:

Հիշեցնենք, որ 2018 թվականին Վրաստանում վավերացվել է 6452 ավտոճանապարհային միջադեպ, որի արդյունքում զոհվել էր 459 եւ մարմնական վնասվածքներ ստացել 9048 մարդ: 2019 թվականի առաջին տասնմեկ ամիսների ընթացքում գրանցվել է 5350 ավտոճանապարհային միջադեպ, որի արդյունքում զոհվել էր 427 եւ մարմնական վնասվածք ստացել 7291 մարդ:



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Բրիտանացի երգիչ … Մերկուրի: 8.Հացազգի կուլտուրաների հատիկներն աղալուց ստացվող մթերք: 10.Գիշատիչ թռչուն: 11.Նիգերիացի ֆուտբոլիստ … Էլիակվու: 13.Անգլիացի գրող … Քրիստի: 14.Շինանյութ: 16.Գետ Հայաստանում: 17.Դեպի ներքեւ: 19.Աֆղանստանի մայրաքաղաքը: 21.Ֆրանսիացի նկարիչ Ջեյմս …: 22.Նոբելյան մրցանակի դափնեկիր հոլանդացի տնտեսագետ՝ … Թիմբերգեն: 23.Օդագնացության եւ տիեզերական տարածության հետազոտությունների ազգային վարչություն: 27.Մարմնի՝ աջ կամ ձախ կողմը՝ թիկունքից մինչեւ ազդրը: 29.Ըմպելիք: 32.Գետ արեւելյան Վրաստանում: 33.Արժեք, գին: 35.Ոսկուց պատրաստված: 36.Քաղաք Վրաստանի հարավում, Քվեմո Քարթլի երկրամասում՝ Թեթրի …: 37.Էգ ուլ: 39.Ամբիոն, ատյան: 42.Պերճ, փառահեղ: 44.Բրազիլացի ֆուտբոլիստ: 46.Քաղաք Թուրքիայում: 49.Ոլորած առասան: 50.Լեռնանցք: 53.Վախկոտ: 54.Երաժշտական երկի տոնայնությունը՝ կառուցվածքը: 55.Ազնիվ մորենու պտուղը: 56.Արեւմտահայերեն՝ նրա: 57.Լարային աղեղնավոր երաժշտական գործիք: 58.Հայր (խոսակց.): 59.Հին գերմանական ցեղ: 60.Գնդակը խաղադաշտից դուրս: 61.Նավի արագության եւ նրա անցած ճանապարհի չափման նավագնացական սարք:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Հարավ-Ամերիկյան պետություն: 2.Վրաստանի ժողովրդական արտիստուհի … Կվերենչխիլաձե: 3.Համեղ, անուշ: 4.Ֆրանսիացի գրող Ալեքսանդր …: 5.Սկզբունք: 7.Ճապոնական ավտոմեքենա: 9.Արեւի աստվածը հին եգիպտական դիցաբանության մեջ: 12.Ծագումով հայ երգահան … Նամին: 15.Փոքր Ասիայի արեւմտյան ափին, Զմյուռնիայից հարավ գտնվող հին քաղաք: 18.Որդու թոռը: 20.Վրաստանում գործող բանկ: 24.Լսողության օրգան: 25.Աղ դրած: 26.Բերանից թուք թափել: 28.Բազալտ, մարմար, տուֆ: 30.Ֆրանսիացի գեղանկարիչ Կլոդ …: 31.Գոյություն չունի: 33.Ագրեգատ, մեխանիզմ: 34.Ծառի բնից կտրած մաս: 38.Սրունքի մեծ ոսկորը՝ ծնկից մինչեւ ոտնաթաթը: 40.Մտքերի մեջ ընկած: 41.Պտուղ տվող: 42.Զգացմունքային վիճակ: 43.Աշխարհամաս: 45.Հին հռոմեական պետական գործիչ, զորավար: 47.Հայոց առաջին մայրաքաղաքը: 48.Մեքսիկացի դիմակավոր հերոս: 51.Ինչպես (բրբ.): 52.Լամպ, կանթեղ:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Կոնգո: 4.Լիտվա: 9.Իրանական: 10.Տհաճ: 11.Դաս: 13.Ագաթ: 15.Արա: 16.Շահն: 18.Ողն: 19.Ներ: 20.Արդար: 23.Մկրտել: 24.Ախտա: 25.Մի: 27.Աղա: 29.Վնաս: 30.Կռունկ: 31.Հարո: 34.Ցարդ: 36.Արոս: 37.Են: 38.Իքս: 40.Սեպ: 41.Աբել: 44.Աներ: 45.Ամուր: 46.Րի: 47.Աթանես: 49.Վտակ: 51.Սա: 53.Երիկամի: 54.Րե: 55.Արենա: 57.Որ: 58.Կարաս: 59.Դրամ: 60.Երես: 61.Սի:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Ողական: 3.Գրական: 4.Լոնդա: 5.Տոմսարկղ: 6.Արտաշատ: 7.Ճաճանչ: 8.Պիացոլա: 12.Արամազդ: 14.Թերմացք: 17.Արեգունի: 21.Դրական: 22.Դավոս: 26.Իսա: 28.Ակոս: 31.Հասարակած: 32.Արենի: 33.Ռոպե: 35.Ռաբունի: 37.Ել: 39.Քոչար: 41.Ամարաս: 42.Երեկո: 43.Ծովինար: 45.Աթենաս: 47.Սարդ: 50.Կեկել: 51.Սակե: 52.Արար: 56.Երե:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445